ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

10.08. 2020թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Մարկոսյանը -մարզպետի տեղակալ
Ա.Մխիթարյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղար
Ա.Բեջանյանը, Վ.Ջաղինյանը, Ա.Մատինյանը, Վ.Ղարսայանը, Վ.Հովհաննիսյանը, Դ.Ստեփանյանը, Ա.Թումանյանը, Ա.Սահակյանը, Հ.Գասպարյանը, Մ.Սարգսյանը, Կ.Ադամյանը, Ս.Գրիգորյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական
Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Փոխմարզպետ՝ Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին, մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Գասպարյանին՝

1-շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ Ախթալա համայնքի տուրիզմի զարգացման ծրագրի և «Մորգանի թանգարանի» ստեղծման վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Վ.Ղարսայանին՝

ա/ Լոռու մարզպետի մոտ կայացած թիվ 16 արձանագրության 3-րդ կետով տրված հանձնարարականը փոփոխել և ներկայացնել Վանաձոր համայնքի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը.

բ/ ներկայացնել տեղեկատվություն սուբվենցիոն բոլոր ծրագրերի ընթացքի վերաբերյալ:

/1-շաբաթյա ժամկետ/

3. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

ա/ 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել ամբողջական և վերջնական տեղեկատվություն Լոռու մարզի շարժական և անշարժ սպանդանոցների վերաբերյալ (տրամադրվող վարկ, վարկի չափ, կառուցման հնարավորություններ).

բ/ Ախթալա համայնքի ղեկավարի հետ քննարկել համայնքի ոռոգման համակարգի կառուցման ծրագիրը և ներկայացնել տեղեկատվություն:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Գասպարյանին՝

Սերտ համագործակցություն ցուցաբերել հյուրանոցային և հյուրատնային տնտեսվարողների հետ, վերհանել առկա խնդիրները, հնարավորինս աջակցել դրանց լուծմանը և ներկայացնել տեղեկատվություն:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժ/պ Լ.Վարդանյանին՝

Վանաձորի Շարլ Ազնավուրի անվան մշակույթի պալատի թեքահարթակի հարցը քննարկման ներկայացնել հաշմանդամություն ունեցող անձանց հանձնաժողովի նիստում և ներկայացնել առաջարկություններ դրա լուծման նպատակով:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99